



**«Հետաքննող լրագրողներ»** հասարակական կազմակերպություն

Երեւան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ:(3741) 563363, 580219  
E-mail:[armenmirzoian@gmail.com](mailto:armenmirzoian@gmail.com), [info@hetq.am](mailto:info@hetq.am), URL : [www.hetq.am](http://www.hetq.am)

---

11.08.2021թ

ՀՀ վարչապետ  
Նիկոլ Փաշինյանին

Հարգելի՛ պարոն Փաշինյան,

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Հետքը 2021 թվականի օգոստոսի 11-ին [գրել է](#), որ Ազատամուտ գյուղում տեղադրվել է ռուսական սահմանապահ ուղեկալ: Հետագայում եւս 6 գյուղերում դրանք կտեղադրվեն: Ո՞րն է պատճառը, որ ուղեկալը դրվել է հայկական տարածքում, այլ ոչ թե չեզոք գոտում:
2. Արդյո՞ք Դուք հաստատում եք այն տեղեկատվությունը, որ սահմանապահ ուղեկալը դրվել է ժամանակին Ադրբեջանի ԽՍՀ-ին պատկանող Սոֆուլու և Բարխուդարլու բնակավայրերի մոտ:
3. Ինչպես գիտեք հայկական դիրքերը գտնվում են գյուղից առաջ: Ռուսական սահմանապահ ուղեկալի տեղադրմամբ արդյո՞ք ՀՀ զինված ուժերը պատրաստվում են թողնել հայ-ադրբեջանական շփման գծի այդ հատվածում սահմանի պահպանությունն ու հետ քաշվել: Եվ արդյոք հայկական տարածքի այդ հատվածը, Սոֆուլու և Բարխուդարլու անկլավների հետ միասին, ՀՀ-ն պատրաստվում է հանձնել Ադրբեջանին:
4. Արդյո՞ք ՀՀ-ն բանակցություններ է վարում Ադրբեջանի հետ՝ անկլավային տարածքների փոխանակման հարցով:
5. Ի՞նչ փաստաթղթի շրջանակներում են Տավուշի մարզի սահմանային հատվածներում տեղադրվում ռուսական սահմանապահ ուղեկալներ: Խնդրում եմ տրամադրել փաստաթղթի էլեկտրոնային տարբերակը:

6. Հարցման պատասխանի օրվա դրությամբ քանի՞ ռուսական ուղեկալ է տեղադրվել և որտե՞ղ: Տեղանքի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ըստ աշխարհագրական կորդինատների:
7. Առաջիկայում էլ ո՞ր հատվածներում կտեղադրվեն ռուսական սահմանապահ ուղեկալներ: Տեղանքի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել ըստ աշխարհագրական կորդինատների:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ

«Հետք» թերթի լրագրող

Արմեն Միրզոյան

